

## ՆՈԳՈՒԷՎ ԾՅՈՒՂԻ ԾԱՆԱՊԱՐՆԸ

«Տասներկու պեպոթյուն խորհուրդ էրեցին,  
Գաղթականի բախարը չորոշեցին,  
Այի, բացվեր ճանապարհներ, Էրթենք հայրենիք...»

Արուսյակ Սահակյանի գրառած, «Նարոյի» երգած երգերից է: Արուսյակի համար հոգու և ճյուղի ճամփաները շրջանցելի չեն, դրանց մեջ մշեցու արյան կանչն է, փոհմի ներծծուն, խիտ, ամուր ավանդույթները և երգը, պարը, որոնք այդ նույն ճամփաների հետքը պիտի ունենային իր փայփայած «Նարոյի» գոյությամբ, որի ձայնագրությունները Ազգային ռադիոյի ձայնադարանում հարյուրից ավելի են: Եվ ամեն ինչ, որ Մշո դաշտ է, Նեմրութ լեռ է, Մշո փուն է ու Մշո հարսնուկ, նրա մեջ ամեն օրվա հետ թանձրացող կարոտ է: Կարոտը շա՛ր հազվադեպ բարձրաձայնում է՝ վերհուշի անկեղծությամբ, իր խոսքով՝ ընդերքը քանդելով: Կուրակվում, կուրակվում ու հանկարծ մեկեն բացվում է կարոտը, որ նրա համար մեկ անուն ունի՝ պարմական Նայասփան: Կորուսյալ երկրի կարոտն իր հոգում անթելելը ոգու գորոթյուն է, ակունքների մաքուր, անաղարտ պահպանում է, որին կոչված է Արուսյակը՝ իր գործով, իր պահվածքով, իր օրինակով կարոտն այլոց մեջ փոխանցել-պահելուն նվիրյալ: Երիցս օրինյալ են բոլոր նրանք, ովքեր հոգու և ճյուղի ճամփաներին հայացք պահել ու սերունդների հայացքն էլ դեպի ակունքը դարձնել գիտեն:

...Առավոտյան ժամը 4-ին հասանք Երևան, և առաջինը զանգահարեցի Արուսյակին. «Բարև»: «Բարևն Աստծունն է», - և հանդիմանեց, - «Խե՛նթ ես, ի՛նչ է, ինչու՞ ես այս ժամին զանգում»: «Արուսյակ, ես փեսա քո Մուշը,-ասացի,- Մուշից եմ գալիս, մտա Երևան, առաջինը քեզ պիտի զանգելի»:

Երկար լռություն, թույլ շնչառություն, և... «Արի՛ փուն, փեսանեմ աչքերդ, որ փեսել են...»:

Արուսյակը մի անգամ չէ, որ ինձ պարմել է մշեցի իր փափի մասին: Մանուկ էր, երբ պապը մեռավ: Տաքը, նրա մշեցի փարեկիցները, մանավանդ հեքիաթասաց Նորբուր Ձունոն, Մշո աշխարհի առաջին «պարմիչներն» էին (Արուսյակի բնութագրումն է): «Տապս քչախոս էր, բառը ճշգրիտ ու չփնտրված, բայց հիշողություն ու պարմություն՝ չմարող մրմուռի հետ կուլ էր փալիս: Ամեն Աստծու օր մութուլուսին արթնանում էր, մեր դռան հորից ջուր էր քաշում, մի երկու ավի ջուր էր զարկում երեսը և իր միակ աղոթքն էր անում. «Բարի աղոթքնի բարի Աստված, իմ մեկիկ Աստվածն իմ կանչե. առաջ հասնիս իսնե նեղյալներին, ետոք ընձի»: Իրենից նեղյալը չկար, բայց բարի լուստ հետ Աստծուն աղոթում էր, որ իրենից նեղյալներին փեսնի»:

Արուսյակի փապը, ո՛չ հանուն որևէ խորհրդանիշի, մի անգամ իր սրտի խնդիրք ու խնդրանքն է բացել Արուսյակին. «Կմեռնիմ, լաո՛, Էրգիր չըմ փեսնի. բան է, թե եղնի, էրթաս Էրգիր, ավ մը հող բերիս, թալիս իմ գերեզմնի վրեն, իմ օսկոներ հանգստիս»:

Մեր հեռախոսագրույցին Արուսյակը չհարցրեց՝ Մշո դաշտից հող բերե՛լ ես. նա գիտեր, որ ես բերած կլինեմ՝ իր անցավորների շիրիմների վրա շաղ փալու համար: Երբ մի քանի օր անց մենք գնացինք Երազգավորս, Արուսյակն ասաց. «Նիմա արդեն ես էլ եմ հանգիստ, որ փափիս ոսկորները խաղաղվեցին»:

Բնականաբար պիտի շարունակվեր մեր այն գրույցը, որ ամեն պարեհ առիթով՝ Երևանում, թե Շիրակ կարարած մեր համապետդ այցերին կայացել է, ու հիմնական թեման եղել են նրա փափն ու պապը, Մշո աշխարհի մասին պարմությունները:

«Նայրս մի օր իր հորը հարցրել է. «Ինչու՞ եղբան ճամփեքով գաղթեցիք և ես գյուղում մնացիք»: Նայրն ասել է. «Սահմանի բերան էր, էստեղից մըր էրկիրը մոտ է. կմրածեինք, թե օր կեղնի, սահման կբացվի, կբանձրնայինք դիմացի սար, կգլխիվրեինք, Ալաշկերտի դաշտով կէթայինք Մուշ»: Եվ հիմա ինձ թվում է, թե ամեն առավոտ պապս նայել է այդ սարին, մտքում մեզ ծանոթ էն երգի բառերով ասել է. «Սար ջան, մի քիչ կ՛ր գնա, մեր երկիրը փեսանեմ»: Բայց

սարը չի թեքվել, և պապս կարոպից է մեռել: Այդ նույն ցանկությունն ու կարոպը չէ՞ երգի մեջ. «Մարեր ջան, ե՛ր գնացեք, փեսնիմ իմ յարը»:

«Մար ջան» բառերի հետ Արուսյակի ձեռքն ինչ-որ բան ետ փանելու շարժում արեց. կանացի ձեռքի մեղմ շարժումն ահռելի ներշնչանք ուներ: Ինձ թվաց, թե իր բարակիկ մաքրներով սարը մի կողմ է փանում, որ մշեցիները փեսենն Մուշը:

«Երկիրը թողած ամեն հայի մեջ,- պարմում էր Արուսյակը,- մի հզոր ազգային վերխոյացած կերվածք կա. նա չի պարմում, թե իր որ հարազատին որտեղ և ինչպես կորցրեց, նա Էրզրի կարոպն ունի խորհրդանիշ՝ «Ախ, Էրզիր»: Էրզիրը նրա համար հարազատ է, ժառանգ՝ ծնված ու ջնջված, փուն, օջախ, ոգի, կյանք, ամեն, ամեն ինչ: Անպարագիծ ու հստակ իմաստ է միաժամանակ՝ հող հայրենի, ջուր կենարար»:

Ես լավ գիտեմ Արուսյակին, գիտեմ, որ նրա հետ գրուցելը ոչ միայն հաճելի է ու հետաքրքիր, այլև ցանկացած գրույց հսկայական նյութ է, մանավանդ, եթե թեման մեր կորուսյալ երկիրն է, նրա ժողովրդի բանահյուսությունը, մշակույթը, սովորույթներն ու ավանդույթները: Եվ ուրեմն՝ նախկինում կայացած հեռուստատեսային մեր գրույցից հարվածաբար վերցնենք այն կտորները, որոնք վերաբերում են այս գրքում արձարժված թեմաների, այս պարագայում՝ Արևմտյան Նայասփանին ընդհանրապես և Մուշին՝ մասնավորապես:

Ես այսօր ուզում եմ մշեցի մնալ

Նեռուստատեսային հաղորդումը նկարահանվեց Ծիծեռնակաբերդում՝ ապրիլի 24-ին նախորդող օրը:

Այդ օրն ինձ թվաց, թե մեր այդ գրույցը ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վերջ, ո՛չ հիմնադրույթ, ո՛չ երկրորդական ելակետ: Այդպես կարող է գրուցել ինքն իր հետ ամեն հայ իր ողջ կյանքի ընթացքին: Զրուցել անկեղծ, անսեթևեթ, անկեցվածք, հոգու ու մտքի ինչ-որ անթեղված պրկումով:

Ես այն պապավորությունն ունեի, թե Արուսյակի մշեցի պապի ու փարի համար Երազգավորս գյուղի փոքրիկ բարձունքը, որտեղից Մշո դաշտի ուղղությամբ են նայել նրա փարն ու պապը, նույն խորհուրդն ունի, ինչ Եղեռնի հուշարձանը Երևանում: Ամեն ճամփա փանում է դեպի մանկություն: Եվ հետո, չգիտես բախարի որ անհետեթ լուծումով, դառնում է գաղթի ճամփա: Եվ ամեն բարձունքի հետ անհույս հայացքը Մշո դաշտ է որոնել: Մտովի ամեն ինչ կյանքի մանրամասների ճամփա է դառնում՝ մանկության ճամփեքից մինչև գաղթի ճամփեք:

– Ձեր փարը երբևէ Մշո դաշտի ծառ ու ծաղկից խոսու՞մ էր. ի՞նչ հրապույրներ է ունեցել այդ դաշտը:

– Տարիս պարմածները Մշո դաշտի ծառ ու ծաղկունքի մասին... մեզ անձանոթ անուններով, քաղցրահո՛նչ, հազար փեսակ, ու չեմ կարողանում վաճառքի հանված ծաղիկ գնել՝ այս հուշարժուր բերելու համար: Երևի մանկամտորեն շատ էի գնայլվում Էրզրի մասին պարմածներով, և փարս ասում էր. «Շաքար էր, շան բերան էր»: Տարս ոչ մեկին վիրավորելու ցանկություն չուներ. պարզապես պարմական փաստն էր արձանագրում, որ իրենց հրաշք երկիրը, հրաշք էլ չլիներ, նրանց աչքին հրաշք պիտի երևար, երկրագնդի այդ ամենաքաղցր պարառը օտարի ձեռքին էր, օտարի բերանում. ե՛ր իրենցն էր, որպես հայրենի հող, ե՛ր իրենցը չէր, որպես պարկանելիք: Այս անհասկանալի, այս անտրամաբանական փրամաբանության թելադրանքն էր այդ ասացվածքը՝ «Շաքար՝ շան բերանում»: Երբ փարս ինձանից խնդրում էր Մշո դաշտի հողից բերել, նրա այդ ցանկությունը շատ բնական էր, ինչպես և իր հող-հայրենիի ընկալումը. մի ափ ծննդավայրի հող, որպես իր հողանյութ շինվածքի հողեղեն ավարտ:

– Արևմտահայության փրկված անհատներն այսօր, իրենց Նայասփան երկրի մեկ այլ հարվածում, փուն ու փեղ էլ շինեցին, զավակ ու ժառանգ էլ ծնեցին, բայց մեռան Էրզրի կարոպով:

– Կարո՞ւն անբաժան է: Փրկվածները սփռվեցին աշխարհով մեկ, ապահովեցին կենսական ապրելաձևի հիանալի պայմաններ, բայց Նայաստան երկիր կարճապես այցին միայն մեկ ափ հող են վերցնում հեփները: Նոգեկան աններդաշնակ գոյության գիտակցումն է, վերջին հոգոց, կորցրած հայրենի ծուխ ծխանիի անթեղված կսկիծ: Ու փարփա հոգու ամենաբնական պահանջ-խնդիրքը դարձել է ինձ համար դաժան, անիրականանալի պատգամ:

– Ի վկայություն՝ բերեմ Բաֆֆու մի հորդորը, որ հիշողությունն անցյալի հետ կապելու ամփոփ, փարողունակ ձևակերպում է. «Վանա բերդի պարսպաքարերի վրա և Վասպուրականի մեջ՝ բլուրների գագաթին՝ հայր փեսնում էր անթիվ արձանագրություններ, իրանց սեպածն բևեռագրերով, որոնք հազարավոր փարիներ պատերազմելով ժամանակի հետ, պահել էին հայոց հին, շափ հին թագավորների հիշատակարանները: Այն անբարբառ և խուլ նշանագրերի մեջ հայր կարդում էր իր վաղեմի մեծությունը»: Շեշտե՛մ՝ կարդում էր իր վաղեմի մեծությունը:

– Ի՞նչ մարդ ու մարդկություն. բնության մեջ երբևէ նկատվե՞լ է, որ արմաքից կտրված ճյուղը դալար մնա կամ որ անկյունը դնես՝ հավերժ կանաչի:

– «Նարոյի» միջոցով ժողովրդի երգը երգելով, արդյո՞ք փորձում էիք ու փորձում եք կամ սփոփում եք Էրզրի կարոտով ապրած ու ապրող մարդկանց:

– Նային հատուկ գեղեցիկ շրջանակի մեջ դրեցիր իմ մի պողոտանգ գործը: Երբևէ այդպես չեմ մտածել. ինչպես կա ենթագիտակցություն, այնպես էլ, երևի, կա ենթահոգի, որ զգում է, բայց որը հստակ գիտակցություն չի դառնում: Ես բանահավաք էի, բանագետ, ես չէի ուզում, որ այդ երգերը մնան լուսած ժառանգություն, ես չէի կարող չգիտակցել նաև դրանց փոխանցման արժեքը: Ես նկատում էի նաև, որ մեր փարեց սերունդը, իմ ծերուկները, այսօր թող ներվի, այսօր թող ինձ թույլ փրվի խոսել միայն արևմտահայերի մասին, մեզանից մի քիչ նեղացած էին, մեզ հետ մի քիչ խռով էին ապրում:

– Մի՞թե վախ ունեին կամ ունեն, թե իրենց ունեցած ժառանգությունը՝ հոգևոր ժառանգությունը, չի փոխանցվի հաջորդող սերունդներին:

– Ոչ, իհարկե, պարզապես համոզված էին, որ կփոխանցվի, վստահում էին ծագումնաբանական օրենքների ուժին, գիտեին, որ ինչպես թռռան աչք ու հոնքն է նման պապի աչք ու հոնքին, այնպես էլ թոռը մի օր պապի աչքով պիտի նայի աշխարհին: Պապը մշտապես վստահ է եղել, որ «Ծառն իր արմաքին կրունի»: Գուցե չէր կարող չնկատել, որ պապենական ծառն ուրիշ ջրով են ջրում, և արմաքը խռոված էր ո՛չ թե օտար ջրից, այլ օտար ջուրը որպես մայրական կաթ ընդունող իր ճյուղ ու փերկից: Նաջորդող սերունդն արդեն այսպեղ էր ծնվել. նա էլ ի՞ր ծննդավայրի հող ու ջրի, ի՞ր ժամանակի հետ էր ներդաշնակ: Պապը հասկանում էր նաև այդ օրինաչափությունը և ոչինչ չէր պահանջում իր զավակից: Նա կարող էր պաշտպանել միայն ի՞ր իրավունքը՝ ի՞ր ցավի, ի՞ր կորստի իրավունքը. լուռ էր ու խռով: Եվ մի օր պապի լուռ ու խռոված հայացքը ակնդետ կանգնեց որդու, թռռան աչքի առջև, թափանցեց հոգու խորքը, գրավ այնպեղ սերնդակապի ազար անկյունը և բույն դրեց այնպեղ: Երբ պապի ու թռռան հայացքները ժառանգականության հիմունքով հանդիպում են, հող ու ջրի կանչով ձուլվում, դա կոչվում է ազգայնականություն, ազգայնամոլություն, անիրավունք պահանջարիություն: Ժառանգականությունն էլ իր իրավունքը, իր օրենքն ունի: Գիտե՛ս, թե հայրիկս ինչպես է իր հորից սովորել երգերը. հայրը լուռ թե բարձրաձայն չի ուզել, որ հայրիկս այդ երգերը երգի: Նայրիկս նկատել է, որ պապս ամեն առավոր շափ վաղ արթնացել է, որ գնա գոմ, անասուններին կեր փա: Եվ գոմում, անլեզու անասունների կողքին, կիսաձայն երգել է իր հետ բերած երգերը: Նայրս, մանուկ, պապիցս առաջ գնացել է գոմ, պառկել է մսուրի մեջ, խոտով ծածկվել, որ լսի իր հոր երգերը: Այդպես է սովորել: Մի քանի երգի բառերը, երգարները կիսափ գիտեր. երգարաններից հանում էի երգի լրիվ բառերը, փալիս հայրիկիս, երեխայի պես ուրախանում էր, օրերով հենց այդ երգերն էր երգում, և երգը նորոգվում էր: Ժամանակի մասին եմ ասում, ոչ անհարի. ժամանակը, եթե անգամ մոլորեցնող քամի է փչում, լուռ է, երբ ծագումնաբանությունն է ուզում խոսել:

– Նույն եկած մեր երգերի մեջ ո՞րն է ամենաթանկը:

– Այդ երգերի մեջ թանկ մի բան կա՝ ո՛չ թե բանաստեղծել, այլ ապրել ամբողջ կյանքը բանաստեղծական կենսաձևով, ապրել շրջապատող աշխարհի հետ շունչ շնչի և ոչ թե անձնավորել, շնչավորել բնությունը որպես բանաստեղծական պարկեր, բանաստեղծական հնարանք, գրուցել քար ու թփի հետ, ծառ ու ծաղկի հետ՝ ասես հոգեկից հարազատի հետ, կիսել բնության հետ հոգու խինդ ու ցավ: Այսինքն, մարդու և բնության միասնությունը՝ դարձած բանաստեղծական ապրում: Ահա այն երգավորը. «Ելնինք սարը, բռնենք բոլորի պարը»: Ես՝ բեմահարթակի սովոր սերունդ, բեմահարթակի հազարամյա պարմությանը փեղյակ, հանկարծ զգացի, որ ոչ մի բեմահարթակ շուրջպարի համար սարի լանջ ու հանդ չի դառնա, ու բեմը աչքիս ու հոգուս համար դարձավ նեղ: Այդ փոքրիկ պարերգի երկրորդ փողը՝ «Մարեր ջան, է՛ր գնացեք, փեսնիմ իմ յարը», սուկ երգավոր չէ, սա հոգեկից գրույց է սարի հետ, սարը չափի դիմանար կարողի կանչին ու մի կողմ պիտի թեքվեր, որ յարը յարին փեսներ: Ու այսպես, ամեն օր իր հող ու ջրի հետ երգածայն գրուցողը հանկարծ փարիներով լռում է. սա՛ է մեր ողբերգության գինը, և այս գինը դժվար թե որևէ արժեք ունենա դիպորդ աչքի համար: Նայրենին գո՛յաձև է և ոչ պետական սահմանների մեջ շնչահեղձ հողակտոր: Ամենօրյա գոյաձև և ոչ էլ վեհ գաղափար միայն կամ խորհրդանիշ. «Էրգիր» բառը դարձել է կորցրած Արևմտահայաստանի խորհրդանիշ: Բայց Էրգիր փեսած ամեն մի արևմտահայի համար դա ոչ թե խորհրդանիշ էր, այլ վերջին շունչ, վերջին հոգոց. «Ա՛խ, Էրգիր»: Ամեն արևմտահայի հետ ամեն հանդիպման ընթացքին վեր էր խոյանում մի հզոր ազգային կերպվածք. ո՛չ մի անգամ նա բերան չբացեց և չպարմեց, թե իր ո՛ր հարազատին որպեղ և ինչպես կորցրեց, ասում էր՝ «Ա՛խ, Էրգիր կորավ մըր վրեն»:

– Ամեն մեկս էլ հիշարակի խնկարկումի մի եղանակ ունենք, ամեն մեկի վարմունքն իր համար յուրահատուկ կամ սովորական, բայց այլոց համար, երևի թե, արքառոց:

– Նասկացա ասածիդ իմաստը, որ հարց չէ, բայց հարցի ձևով է ասվում: Ես, օրինակ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում շաբ կուզենայի մի քարի կտոր գտնել, այդ քարի կտորի վրա մեր փոհմի՝ Սահակ պապիս ու մյուս նահապակների անունները շոշափել: Սա իմը՛, միայն իմը ունենալու, շոշափելու անձնապաստան սին ցանկություն չէ... Սա այն է, երբ ամեն մարդ իր ցավի հետ հաշտ ապրելու իր ձևն է գտնում, վշտի հետ համակերպվելու իր ձևը, և միայն մեկ նպատակով, որ իր վիշտը չավելացնի աշխարհի վշտին: Սա մարդասիրություն է և ո՛չ անձնասիրություն: Եղեռնի հուշահամալիրը կա, բայց ամեն մի արևմտահայ եղեռնական այս վերհուշի հետ հաշտ ապրելու ի՛ր ձևն է գտնում. մեկն իր գյուղում փուն է կառուցում՝ Գևորգ Չաուշի բարձրաքանդակով, մյուսը որդու անունը դնում է Անդրանիկ, թոռան անունը՝ Արաբո: Նայրս իր հոգու պարտքն էր համարում մեր ընթանեկան գերեզմանափան անկյունում իրար վրա հավաքել անբաշ քարեր, վրան դնել անբաշ ժայռաբեկոր՝ ի հիշարակ Մշո դաշտի Արտոնք գյուղի բոլոր նահապակների...

*Շարունակելի*